2.09.2021
348-12

Երևանի քաղաքապետ
ՀայկՄարությանին

Բողոք

Հարգելի պարոն Մարության,

2021 թվականի օգոստոսի 12-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցում էր ուղարկել Երևանի քաղաքապետարան (կցվում է), որին 2021 թվականի օգոստոսի 19-ին Երևանի քաղաքապետարանը տրամադրել է թերի պատասխան, չի պահպանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման վերոնշյալ դրույթների պահանջները, չի պատասխանել մեր հարցմամբ ներկայացված հարցերից ոչ մեկին (կցվում է):

2021 թվականի օգոստոսի 19-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, հիմնվելով Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 8-րդ կետի կարգավորումների վրա, կրկնակի հարցում (բողոք) է ներկայացրել Երևանի քաղաքապետարան (կցվում է)՝ խնդրելով հարցմամբ և կրկնակի հարցմամբ ներկայացված հարցերին տրամադրել լիարժեք պատասխան:

Նաև, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նշել էր, որ իր կրկնակի հարցումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի տեսանկյունից բողոք է, ուստի նույն օրենքի 70-րդ հոդվածի իմաստով քննարկման է ենթակա վերադասության կարգով՝ ոչ այն վարչության կողմից, որը տրամադրել է մեր հարցման թերի պատասխանը (հարցման թերի պատասխանը ստացել էինք Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունից):

Այդուհանդերձ, ի պատասխան 2021 թվականի օգոստոսի 19-ի իր կրկնակի հարցման (բողոքի)՝ ստացել ենք Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի օգոստոսի 25-ի գրությունը (կցվում է), որով կրկին չեն պահպանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 8-րդ կետի պահանջները, նաև, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի բողոքը չի քննարկվել Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք շրջանակներում, իսկ պատասխանը տրամադրվել է քաղաքապետարանի նույն վարչության կողմից, որի տրամադրած նախկին պատասխանը բողոքարկել էինք:

Արդյունքում, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2021 թվականի օգոստոսի 12-ի և 2021 թվականի օգոստոսի 19-ի հարցումներին պատասխանները ներկայացվել են օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառմամբ կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով՝ խնդրում եմ սույն բողոքի հիման վրա հարուցել վարչական վարույթ, քննել Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից Ինֆորմացիայի

ազատության կենտրոնի 2021 թվականի օգոստոսի 12-ի և 2021 թվականի օգոստոսի 19-ի հարցումներին ներկայացված պատասխանների իրավաչափությունը, համապատասխանությունը Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման պահանջներին, հանձնարարել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին ի պատասխան տրամադրել պահանջված տեղեկությունները՝ օրենդրությամբ սահմանված կարգով և պահանջների պահպանմամբ:

Ուշադրություն: Խնդրում ենք վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը (հարուցման որոշումը), վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների (վարչական լսումների) մասին ծանուցումը ներկայացնել **բացառապես էլեկտրոնային եղանակով** sh.doydoyan@icloud.com **էլեկտրոնային փոստին:**

Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը՝

- Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2021 թվականի օգոստոսի 12-ի հարցման լուսապատճենը,

Երևանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի օգոստոսի 19-ի պատասխան գրության լուսապատճենը,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2021 թվականի օգոստոսի 19-ի հարցման լուսապատճենը,

Երևանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի օգոստոսի 25-ի պատասխան գրության լուսապատճենը:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ ՇուշանԴոյդոյան